

Մայր Աթոռ Ս. Էջմիածին
Տեղեկատվական Համակարգ
Հեռ.: (374 10) 517 128
Հեռախոս: (374 10) 517 301
Էլ-փոստ: holysee@etchmiadzin.am
Տնօրեն՝ Տ. Վահրամ քին. Մելիքյան

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հուլիսի 8, 2008թ.

Նոր հրատարակություն. Շատորքիան. «Քրիստոնեության հանճարը»

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը լույս է ընծայել ֆրանսիացի հռչակավոր գրող Ֆրանսուա-Ռընե դը Շատորքիանի «Քրիստոնեության հանճարը» գրքի հայերեն թարգմանությունը: Գիրքը թարգմանվել է ֆրանսերենից Պարզև Շահբազյանի կողմից և տպագրվել «Արմեն և Նունե Սարգսյաններ» հիմնադրամի մեկենասությամբ:

«Քրիստոնեության հանճարը» գրքի նպատակն է «...ապացուցել, որ այն բոլոր կրոններից, որոնք երբևէ գոյություն են ունեցել, քրիստոնեական կրոնը ամենաբանաստեղծականն է, ամենամարդկայինը, ամենանպաստավորն ու օգտակարը ազատությանը, արվեստներին և գրականությանը...»:

Չնայած աշխատության ջատագովական ոգուն՝ այստեղ տիրապետող է զգացմունքը, քանի որ Շատորքիանն ավելի շուտ բանաստեղծ է, արվեստագետ ու հռետոր, քան բարոյագետ ու փիլիսոփա: Այն բովանդակում է քրիստոնեական վարդապետությունը և ընդգծում քրիստոնեական արժեքների մեծ կարևորությունը հասարակության կյանքում:

###